ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ <<ԶՈՎՔԻ Գ.ՇԱՀԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի

2021-2022 ՈՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ

ԾՐԱԳԻՐ

Դպրոցի տնօրեն՝ Է.Նիկողոսյան

ՀՀ Կոտայքի մարզի Զովքի գ. Շահինյանի անվ. Միջնակարգ դպրոց
РА Котайкская область Зовк Средняя Школа им. Г. Шагинян
ГНТО *03510097*

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
«ԶՈՎՔԻ Գ.ՇԱՀԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ-Ի ՄԻԱՑՅԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԹԻՎ 3 ՆԻՍՏՈՒՄ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ _____ *Մ.Կիրակոսյան*

2021-2022 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան

ԾՐԱԳԻՐ

Ներածություն

ՀՀ հանրակրթության նպատակներից և բարեփոխումների ռազմավարությունից բխում է, որ կրթությունը անհատի, հասարակության և պետության շահերից բխող ուսուցման և դաստիարակության միասնական գործընթաց է, որը նպատակաուղղված է հայ ժողովրդի և մարդկության հոգևոր ժառանգությունը, գիտելիքները և փորձը յուրացնելու, պահպանելուն, հարստացնելուն և սերունդներին փոխանցելուն:

Կրթությունը իրականացվում է դպրոցում, որը աշակերտների մտավոր, հոգևոր ֆիզիկական կարողությունների և հմտությունների բացահայտման և զարգացման հաստատություն է :

<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի պահանջներից է <<Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է>>:

Առաջնորդվելով ՀՀ <<Կրթության մասին>> օրենքով ,<<Հանրակրթության մասին>> օրենքով, <<Հանրակրթության պետական կրթակարգով>>, <<Միջնակարգ կրթության պետական չափորոշչով>>, <<Աշխատանքային օրենսգրքով>>, <<Դպրոցի կանոնադրությամբ>> և այլ իրավական ակտերով ու օրենքներով ձգտելու ենք հասնելու հանրակրթական դպրոցի շրջանավարտի կատարելատիպին: Մանկավարժական կոլեկտիվը 2021-2022 ուստարվա համար ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները պետք է համարի.

- Միջնակարգ պարտադիր կրթության իրականացումը
- Ուսումնամեթոդական և դաստիարակչական աշխատանքների որակի բարձրացում, դրանց ձևերի, միջոցների ու հնարքների արդիականացում
- Կրթական պրոցեսը, դասընթացը, արտադասարանական աշխատանքները հետաքրքիր ու վերահսկելի դարձնելը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր աշակերտի հակումները , պահանջմունքները, ընդունակությունները ու ձիրքը
- Սովորողներին բնության ու հասարակության մասին անհրաժեշտ գիտելիքներով, կարողություններով և հմտություններով զինելը
- Աշակերտների աշխարհահայցքի զարգացման և անհատականության ձևավորման նպատակով իականացնել մտավոր, բարոյական, ֆիզիկական,

գեղագիտական, աշխատանքային, իրավական, տնտեսագիտական, քաղաքացիական և էկոլոգիական կրթություն և դաստիարակություն

- Անհատականության ձևավորումը և սոցիալական դաստիարակությունը իրականացնել ազգային և համամարդկային, մշակութային և քրիստոնեական արժեքների պահպանմամբ
- Կարևորելով մայրենի լեզվի ուսուցումը՝ զուգահեռ զարգացնել օտար լեզուների ուսուցումը (ռուսերեն, անգլերեն)
- Հայրենիքի վերածննդի համար անհրաժեշտ է տնտեսական, գեղագիտական, կրթական, մշակութային բոլոր հարցերը լուծելու ունակ, հոգեբանորեն պատրաստ սերունդի պատրաստում
- Դպրոց–համայնք կապի նորացում, ամրապնդում և զարգացում

ԲԱԺԻՆ 1

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Անցկացնել 5, 6 տարեկան երեխաների հաշվառում դպրոցի սպասարկման տարածքում	օգոստոս	ՄԿԱԳ փոխտնօրեն,	
2	Կոմպլեկտավորել դպրոցի դասարանները Կոմպլեկտավորել նախակրթարանը	Սեպտեմբեր 1-ին	Տնօրեն փոխտնօրեններ, դասղեկներ	
3	Հաստատել ուսումնական պլանը՝ մանկխորհի որոշման հիման վրա	Օգոստոսի 30-ին	Տնօրեն	
4	Կազմել և կառավարման խորհրդին ներկայացնել -Տարիֆիկացիոն ցուցակը -Հաստիքացուցակը -Նախահաշիվը	Մինչև սեպտեմբերի 1-ը	Տնօրեն հաշվապահ	
5	Հաստատել ուստարվա համար՝ - մանկխորհի կազմը -առարկայական մասնախմբերի ղեկավարների կազմը -կատարել աշխատանքի բաժանում -հերթապահություն -ուստարվա միջոցառումների պլան	Մինչև սեպտեմբերի 1-ը	Տնօրեն	
6	Վավերացնել I կիսամյակի դասացուցակը և գործածության մեջ դնել դասամատյանները:	Մինչև սեպտեմբերի	ՄԿԱԳ, ՈՒԱԳ փոխտնօրեններ,	

	Հաստատել վարչական և մանկավարժական աշխատողների աշխատանքային պլանները	1-ը	դասղեկներ	
7	Հաստատել գրադարանավարի, հոգեբանի, հատուկ մանկավարժի, սոցիալ մանկավարժի տարեկան ծրագրերը: Հաստատել անհատական ուսումնական պլանները:	Մինչև սեպտեմբերի 1	Տնօրեն	
8	Աշակերտներին, ըստ նրանց ընդունակությունների ու հետաքրքրությունների, ընդգրկել դպրոցական և արտադպրոցական խմբակներում:	Ուս. տարվա ընթացքում	Տնօրեն ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ	
9	Կատարել միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ երեխաների հաշվառում: Ցուցակը ներկայացնել տնօրենին: Երեխաներին ծանոթացնել դպրոցի ներքին կարգապահական կանոններին, գործող ռեժիմին, ինչպես նաև իրենց իրավունքներին ու պարտականություններին: Բոլոր դասարաններում ստեղծել դասարանական անկյուններ՝ այնտեղ փակցնելով դպրոցի կարգապահական կանոնները:	սեպտեմբեր	ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ	

ԲԱԺԻՆ 2. ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՀԵՏ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման ուղղությամբ, դասղեկների աշխատանքները կատարելագործելու նպատակով դպրոցում ստեղծել I-XII դասարանների դասղեկների միավորումներ:	Մինչև սեպտեմբերի 1-ը	Տնօրեն, ՄԿԱԳ փոխտնօրեն	
2	Ուսումնական տարվա սկզբին հրավիրել առարկայական մեթոդմիավորումների նախագահների խորհրդակցություն:	Ուս. տարվա սկիզբ	Տնօրեն, Ուս, գծով փոխտնօրեն	
3	Ուշադրության կենտրոնում պահել սկսնակ ուսուցիչներին: Նրանց համար կազմակերպել մեթոդամանկավարժական օգնություն: Ծանոթացնել առարկայական չափորոշիչներին, ապահովել մեթոդական ձեռնարկներով, մասնակից դարձնել բաց և ցուցադրական դասերին: Կատարել փոխադարձ դասալսումներ:	Ուս. տարվա ընթացքում	Տնօրեն Ուս. աշխ. գծով փոխտնօրեն	
4	Բարձր դասարաններում պարբերաբար կազմակերպել բանավեճեր, քննարկումներ, կլոր սեղաններ, գիտագործնական կոնֆերանսներ և այլն, որոնք էլ ավելի կնպաստեն աշակերտների ինքնակրթությանը և հոգևոր մտքի զարգացմանը:	Ուս. տարվա ընթացքում	ՄԿԱԳ փոխտնօրեն	

5	Ապահովել ՏՀՏ կիրառումը դասապրոցեսի ընթացքում, իրականացնել ՏՀՏ դասերի դիտարկում՝ ըստ կարողությունների և հմտությունների, ՏՀՏ գիտելիքները խորացնելու նպատակով կազմել աշխատանքային պլան:	Ուս. տարվա ընթացքում	Տնօրեն Ուս, գծով փոխտնօրեն, ինֆորմատիկայի ուսուցիչ	
6	Առարկայի դրվածքի ուսումնասիրություն	Ուս. տարվա ընթացքում	Տնօրեն Ուս. Աշխ. գծով փոխտնօրեն	

ԲԱԺԻՆ 3. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Ուսուցիչներին ապահովել ուսումնական ծրագրերով և երաշխավորված մեթոդական ուղեցույցներով:	Օգոստոս	Տնօրեն Ուս, գծով փոխտնօրեն ՄԿԱԳ փոխտնօրեն	
2	Կազմել և հաստատել անհատական ուսումնական պլանները: Կազմակերպել ըստ այդ պլանների ուսուցումը և դաստիարակությունը:	սեպտեմբեր	Տնօրեն փոխտնօրեններ Բուժքույր, , ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներ, աջակցող թիմ	
3	Կազմակերպել ցերեկույթներ նվիրված տարվա ընթացքում հիշարժան հոբելյաններին, տոներին, համապետական նշանակության միջոցառումներին, տոների և հիշարժան հոբելյարների առիթով լույս ընծայել պատի թերթեր, հրավիրել մասնագետներ տարբեր ուսումնական հաստատություններից (կազմել կիսամյակի և տարեկան միջոցառումների ցանկը և ներկայացնել տնօրենի հաստատմանը):	Ուստարվա ընթացքում	Տնօրեն Ուս, գծով փոխտնօրեն ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ	
4	Ստեղծել 3-5 հոգուց բաղկացած ծնողական խորհուրդներ: Ձևավորել դպրոցական ծնողական խորհուրդ:	Սեպտեմբեր	Տնօրեն ՄԿԱԳ փոխտնօրեն	
5	Հայտնաբերել օժտված երեխաներին, տալ առարկայական խորը, կայուն գիտելիքներ, մղել նրանց ստեղծագործական, որոնողական	ուստարվա ընթացքում	ՄԿԱԳ փոխտնօրեն դասղեկներ	

	աշխատանքի:			
6 Ա	***<u>Դասղեկական աշխատանք</u>*** Օգնել դասղեկներին կազմելու դաստիարակչական աշխատանքների պլան և ներկայացնել հաստատմանը:	Սեպտեմբերի սկիզբ	ՄԿԱԳ փոխտնօրեն	
Բ	Դասղեկներից պահանջել աշխատանքային պլանի հիմքում ամրագրել հետևյալ դրույթները: Ստեղծել դասարանական ամուր կոլեկտիվ, աշակերտներին տալ հայեցի դաստիարակություն, նրանց մեջ արթնացնել ազգային արժանապատվություն և հպարտություն:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ	
Գ	Դաստիարակության նպատակը. Համակողմանիորեն զարգացած, հայրենասիրություն, պետականություն և մարդասիրության ոգով դաստիարակված մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորում:	Ուս. տարվա ընթացքում	ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ	
Դ	Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ և ծառայեցնել երեխաների բազմակողմանի դաստիարակության և մանկական առողջ կոլեկտիվ ձևավորման նպատակին	Ուս. տարվա ընթացքում	ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ	
Ե	Հետևողական աշխատանքի միջոցով հնարավորինս նվազեցնել անհարգելի բացակայությունները: Ծնողների շրջանում անցկացնել բացատրական աշխատանքներ, աշակերտներին սովորեցնել ուսումնական տարվա ռեժիմին, համագործակցել համայնքի ամբուլատոր բուժհաստատության հետ՝ բացակայությունների քանակը վերահսկելու համար:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ	
Զ	Կիսամյակը մեկ-երկու անգամ հրավիրել դասարանական ծնողական ժողով, ամուր հիմքի վրա դնել աշակերտ-դպրոց-ընտանիք կապը:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ	

Է	Յուրաքանչյուր ամսվա վերջին ուրբաթ օրն սահմանել բաց դռների օր՝ ապահովել ծնող-ուսուցիչ կապը:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ	
7 Ա	***<u>Գեղագիտական դաստիարակություն.</u>*** Տանել հետևողական աշխատանք աշակերտների գեղագիտական դաստիարակության գործի բարելավման ուղղությամբ: Կազմակերպել այցելություն պատկերասրահներ:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱԳ փոխտնօրեն	
Բ	Դպրոցում ստեղծել տնօրինությանը կից գեղագիտական դաստիարակության խորհուրդ՝ դրա կազմի մեջ ընդգրկելով նկարչության, երգի, գրականության, եկեղեցու պատմության և հասարակագիտության ուսուցիչներին և հոգեբանին, գրադարանավարին	Սեպտեմբեր	ՄԿԱԳ փոխտնօրեն	
Գ	Սովորողների օգնությամբ ձևավորել շենքի միջանցքներն ու կաբինետները, կազմակերպել գեղարվեստական օլիմպիադաներ, հաշվետու համերգներ:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱԳ փոխտնօրեն, կերպարվեստի, երգի ուսուցիչներ, գրադարանավարը	
Դ	Կանաչապատել դասասենյակներն ու միջանցքները՝ ծաղկամաններում բուսականություն աճեցնելով:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ	
8 Ա	***<u>Ֆիզիկական դաստիարակություն.</u>*** Ստեղծել մարմնամարզական խմբակներ տարբեր մարզաձևերից՝ ֆուտբոլի, վոլեյբոլի, բասկետբոլի:	Սեպտեմբեր	ՄԿԱԳ փոխտնօրեն	

Բ	Դպրոցական բուժքրոջ միջոցով պարզել աշակերտների առողջական վիճակը, ստեղծել ֆիզկուլտուրայի հատուկ խմբեր, հետևել պարապմունքների անցկացմանը:	Սեպտեմբեր	Ֆիզկուլտ. ուսուցիչներ, բուժքույր, ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ	
Գ	Կազմակերպել սպորտլանդիաներ կրտսեր և միջին դպրոցում՝ հաղթողներին պարգևատրելով հուշամեդալներով, պատվոգրերով: Կազմակերպել արշավներ:	Հոկտեմբեր-ապրիլ	Ֆիզկուլտ. ուսուցիչներ, ՄԿԱԳ փոխտնօրեն	
Դ	Անցկացնել միջդասարանական և միջդպրոցական մրցումներ: Այն կազմակերպել բարձր մակարդակով, նախապես իրազեկ դարձնել դասղեկներին, աշակերտներին:	Հոկտեմբեր-մայիս	Ֆիզկուլտ. ուսուցիչներ, ՄԿԱԳ փոխտնօրեն	
Ե	Կազմակերպել առողջության օր, դպրոց հրավիրել բժիշկների տարբեր մասնագիտությունների գծով, կազմակերպել զրույց, զեկուցումներ աշակերտների շրջանում: Յուրաքանչյուր ամսվա առաջին շաբաթվա ընթացքում դասղեկական ժամերին կազմակերպել զրույց՝ նվիրված առողջությանը:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, ՄԿԱԳ փոխտնօրեն, դպրոցի բուժքույր, դասղեկներ	
9Ա	***<u>Ռազմահայրենասիրական դաստիարակություն.</u>*** Կազմակերպել հանդիպումներ հայկական բանակի հրամանատարների, Արցախի ինքնապաշտպանական մարտերի մասնակիցների հետ: Կազմակերպել այցելություն Բալահովիտի զորամաս՝ աշակերտներին ծանոթացնելով զինվորների առօրյային և նրանց պայմաններին: Այցելություն Վ. Սարգսյանի անվան ռազմական	Ուստարվա ընթացքում	Զին. ղեկ Պատմության ուսուցիչներ, Շրջանի զինկոմիսարիատ ՄԿԱԳ փոխտնօրեն, զինղեկ	

	համալսարան, Մ.Մելքոնյանի անվան ռազմական վարժարան և այլն:			
Բ	Այցելություն Հայրենական մեծ պատերազմում, Արցախի անկախության, Հայաստանի սահմանների պաշտպանության համար զոհված մարտիկների հուշարձաններին:	Ուստարվա ընթացքում	Պատմության ուսուցիչներ, ՄԿԱԳ փոխտնօրեն, զինղեկ	
Գ	Անցկացնել ,,Քաղաքացիական պաշտպանության օրը դպրոցում,, միջոցառում: Աշխատանք տանել ոչ ռազմականացված խմբավորումների հետ: Քաղաքացիական պաշտպանության օր սահմանել դեկտեմբերի 7-ը:	Ուստարվա ընթացքում	Զին. ղեկ, ՄԿԱԳ փոխտնօրեն, զինղեկ	
10Ա	***<u>Աշխատանքային դաստիարակություն.</u>*** Բարձրացնել աշխատանքային ուսուցման, աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքների որակը: Դպրոց հրավիրել միջին մասնագիտական ուսումնական հաստատության ներկայացուցիչներին:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱԳ փոխտնօրեն, ուսուցիչներ	
Բ	Դպրոցամերձ հողամասի մշակման և ծառերի խնամքի աշխատանքները կատարել աշակերտների միջոցով, արթնացնել սեր աշխատանքի նկատմամբ: Պարբերաբար մաքրել դպրոցամերձ տարածքը, կատարել ծառատունկ:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱԳ փոխտնօրեն, տեխնոլոգիայի ուսուցիչներ, տնտեսվար	
Գ	Աշակերտների ուժով դպրոցում կազմակերպել աճեցվող ծաղիկների խնամքի գործը: Հոգ տանել, որպեսզի ծաղիկներով ու կանաչ բույսերով կահավորվեն կաբինետները, միջանցքները և սրահները: Ստեղծել կանաչ անկյուն:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱԳ փոխտնօրեն, կենսաբանության ուսուցիչներ	
11 Ա	***<u>Գրադարանային աշխատանք</u>*** Կատարել դասագրքերի բաժանում և վարձավճարների հավաքագրում:	Սեպտեմբեր	Գրադարանավար դասղեկներ	
Բ	Կազմակերպել միջոցառումներ նշանավոր և	Ուստարվա	Գրադարանավ	

	հիշարժան տարելիցների և տարեդարձների վերաբերյալ (Կազմել միջոցառումների ցանկ և ներկայացնել տնօրենի հաստատմանը):	ընթացքում	ար, ՄԿԱԳ փոխտնօրեն	
Գ	Ստեղծել ,,Պատանի ստեղծագործողի,, ակումբ: Նպաստել աշակերտների ստեղծագործական մտքի բարձրացմանը, ի հայտ բերել տաղանդավոր աշակերտներին:	Ուստարվա ընթացքում	Գրադարանավար, կերպարվեստի և երգի, գրականության ուսուցիչներ, ՄԿԱԳ փ/տ	
12	Կազմավորել աշակերտական ինքնավարություն: Խթանել և ակտիվացնել աշակերտական խորհրդի աշխատանքը:	Սեպտեմբեր Ուստարվա ընթացքում	ՄԿԱԳ փոխտնօրեն դասղեկներ	

ԲԱԺԻՆ 4. ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
	Յուրաքանչյուր ամսվա վերջին տնօրինության նիստում ներկայացնել և քննարկել սովորողների հաճախումների, կարգապահության և վարքի հետ կապված հարցեր:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, Փոխտնօրեններ դասղեկներ	
2	Ստուգել պարտադիր կրթության օրենքի սահմանադրական պահանջի կատարման վիճակը դպրոցում և արդյունքները քննարկել տնօրինության նիստում կամ մանկավարժական խորհուրդում:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն Փոխտնօրեններ դասղեկներ	
3	Կատարել աշխատանքներ թույլ առաջադիմող աշակերտների հետ, աշխատանքները քննարկել տնօրինության ընդլայնված նիստում:	Հոկտեմբեր, մարտ	Փոխտնօրեններ, դասղեկներ	
4	Ուսումնասիրել դասղեկների կատարած աշխատանքները, արդյունքները քննարկել դասղեկների խորհրդակցության ժամանակ, տնօրինության ընդլայնված նիստում:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն ՄԿԱԳ փոխտնօրեն	

ԲԱԺԻՆ 5. ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ:	Սեպտեմբեր, կիսամյակնե-րի վերջում	ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ	
2	Հրավիրել ընդհանուր ծնողական ժողով և քննարկել դպրոցի առաջ ծառացած համատեղ լուծման ենթակա հարցեր:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ	
3	Պլանավորել ծնողական խորհրդի աշխատանքները: Յուրաքանչյուր ամսվա վերջին ուրբաթ օրը ժամը 12⁰⁰-ին հրավիրել ծնողական խորհուրդի նախագահների նիստ և ներկայացնել ու քննարկել դպրոցում առաջացած խնդիրները:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ	
4	Ապահովել դպրոցի և ծնողների համատեղ գործունեությունը սովորողների ուսուցման բարելավման գործում:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱԳ փոխտնօրեն	
5	Ծնողներին մասնակից դարձնել սովորողների արտադպրոցական դաստիարակչական աշխատանքներին:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն ՄԿԱԳ փոխտնօրեն	

ԲԱԺԻՆ 6. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Աշխատանք տանել դպրոցի գույքի, սարքավորումների, ուսումնական տեխնիկական միջոցների, դիդակտիկ պարագաների և այլ նյութերի օգտագործման և պահպանման ուղղությամբ:	Ուստարվա ընթացքում	փոխտնօրեններ ուսուցիչներ տնտեսվար	
2	Ապահովել շենքի, ջերմային, լուսային և օդային ռեժիմները: Կանոնավոր վիճակում պահել հակահրդեհային միջոցները:	Ուստարվա ընթացքում	Տնտեսվար	

ԲԱԺԻՆ 7. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Կազմել առարկայական խմբակներ	Սեպտեմբեր	ՄԿԱԳ փոխտնօրեն	
2	Կազմել և վարել մանկավարժական աշխատողների հաճախողների հաշվառման մատյան	Ուստարվա ընթացքում	ՈՒԱԳ փոխտնօրեն	
3	Ուսումնական մասնաշենքի յուրաքանչյուր հարկում, բակում և սրահներում կազմակերպել ամենօրյա հերթապահություն:	Մշտապես	ՄԿԱԳ փոխտնօրեն	
3Ա	Նշանակել հերթապահներ, պահանջել հերթապահներից՝ • հսկել և իրականացնել օրվա հերթապահությունը ուսումնական մասնաշենքում: • կազմակերպել տվյալ օրվա ողջ գործընթացը: • օրվա վերջում աշխատանքային գործընթացի մասին զեկուցել տնօրենին:	Մշտապես	ՄԿԱԳ փոխտնօրեն, հերթապահներ	
4	Կազմակերպել աշակերտների ինքնակառավարման աշխատանքները՝ ըստ դպրոցական աշակերտական խորհրդի կանոնադրության:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱԳ փոխտնօրեն	
5	Դասղեկների հետ վերջնականապես ճշտել սոցիալապես անապահով, ծնողազուրկ երեխաների ցուցակը, հնարավորության սահմաններում ապահովել դասագրքերով:	Սեպտեմբեր	ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ, ծնող. խորհուրդ	

Զովքի Գ.Շահինյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Է. Նիկողոսյան

<<_____>> <<_____>> 2021թ.